

գրեն Կոստանդինոս կայսեր եւ իր մօրը՝ Հեղինէի . նոյնը կը տեսնուի նաեւ մեր պատմութեան եւ ճառընտիրներու մէջ, թէպէտեւ տեղ տեղ կը պահեն ազգային յիշատակութիւններ և աւանդութիւններ: Վերնագրիս անուններուն վերագրուած յատուկ աւանդութիւնները մէջ կը բերենք միայն խառն դասաւորութեամբ, «նաեւ աշխարհակալ թագաւորն Կոստանդիանոս և Տրդատ, Հեղինէ թագուհիւ հանգերձ մեր սուրբ Լուսաւորչաւ եւ Սեղբոսգրոսեաւ զսրբութեան տեղիքս շինեցին և պայծառացուցին բազում զարդուք, յիշատակ թողեալ մեզ ի ժառանգութիւն: Թողում և զայլ բարեպաշտ իշխանս և զպարօնայքն և զտանուտեարքն, որոց անուանք նոցա գրեալ են» (Հան. 33):

«Տիեզերալուր և ամենագով սուրբ վանքս նախնականապէս վիճակեցաւ ազգիս Հայոց, քանզի շինեցաւ հեղինակութեամբ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, յարքունական գանձուց երկուց արքայից Կոստանդինոսի և Տրդատայ, և շնորհեալ ետուն զսա ազգիս Հայոց... Պարգեւեցաք և նորապսակ Պարթևւին մերոյ ի յիշատակ յաւիտենական յազգաց յազգս. ի յերուսաղէմ քաղաքի իջեանս Հայոց աղօթականս՝ զվկայարան սրբոյն Յակոբայ եղբօրն Յովհաննու, զի

---

կան ընթանեաց գերեզմանասան՝ որ մեր քուսկանի 44-70 ին շինուած է: Այս գերեզմանասունը ստորեկրեայ կառուցուածք մը ունի զանազան բաժանումներով, կը պարունակէ քաւէ դուռեր, խոյակներ, մանրաբանդակ նկարներու մնացորդներ, հացի նկանակ, խաղողի ողկոյզ, արմաւենի եւ պսակ: 1863 ին Պ. Սոյսի հոն գտաւ Բանդակագործ Տապան մը, որուն կափառիչին վրայ կար անընթեռնելի արձանագրութիւն մը երկու տողերով արանց խրափանջիւրք ունէր ուրք գիրեր՝ առաջինը ատուրեւէն, երկրորդը երայեցեւէն: Կր կարծուի թէ այս տապանը կը վերաբերէր Ապիաբենի Հեղինէ թագուհիին: